ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ապրիլի 2024 թվականի N 357-Ա

ԼԵԳԵՆԴԱՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19.02.2024-ին «ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար է. Արշակյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «ԼԵԳԵՆԴԱՐ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Ավագյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքել են Տաշիր համայնքի գիշերային ցանցի շահագործման սպասարկման ծառայությունների մատուցման գնման (N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-24/06) պայմանագիր, որի համաձայն՝ կատարողը ստանձնել է Տաշիր համայնքի գիշերային լուսավորության ցանցի շահագործման սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը:

Տաշիր համայնքի Պրիվոլնոյե, Արծնի և Կաթնառատ բնակավայրերի վարչական ղեկավարների կողմից Պայմանագրով Պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտականությունների իրականացման արդյունքում պարզվել է, որ Կատարողի կողմից չեն պահպանվել պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետները:

Տաշիրի համայնքապետարանը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով և N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-24/06) պայմանագրի 2.1.3-րդ կետի պահանջներով, 28.04.2024-ին միակողմանի լուծել է կնքված Պայմանագիրը:

Պայմանագրի լուծման վերաբերյալ հայտարարությունը 29.03.2024-ին հրապարակվել է տեղեկագրում, և 30.04.2024-ի դրությամբ Պայամնագիրը համարվում է լուծված:

«ԼԵԳԵՆԴԱՐ» ՍՊԸ-ն առաջարկվել է տասնօրյա ժամկետում տուժանքի ձևով, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ 3450000 (երեք միլիոն չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ և 2300000 (երկու միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ փոխանցել Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին:

«ԼԵԳԵՆԴԱՐ » ՍՊԸ-ի կողմից որակավորման և պայմանագրի ապահովումները չեն վճարվել:

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.«ԼԵԳԵՆԴԱՐ» ՍՊԸ -ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. ՀՀ Ֆինանսների նախարարություն ներկայացնել ««ԼԵԳԵՆԴԱՐ» ՍՊԸ տվյալները՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2024թ. ապրիլի 08

ք. Տաշիր